մայրիկս միտքս է, իւր անկողնին քով կը պառկէի. նա զիս կը սիրէր, կը պագնէր, մենք պզտի ծով մը ունէինք. ես այս ամէնքը կը յիշեմ, երբ առանձին եմ: Մենք բարբարոս ենք, պէտք չէ այդ յիշատակութիւններն ընենք, այնպէս կ'ըսեն ինձ ամէնքը, բայց միշտ այդ բաներն իմ միտքս կ'ուգան. եւ ես կը սիրեմ այն տղայութեան ժամանակները, այն լեռները, այն ծաղիկները, հոն ոչ ոք ինձ չէր բարկանար, ամէնքը քաղցր էին ինձ հետ, ամէնքը զիս կը սիրէին:

— Քեզ հոս չե՞ն սիրէր, Արփենի:

— Չէ՛, ես հոս Արփենի էլ չեմ. Զոյի եմ: Մէկ նոր մարդ մը եկաւ հիմա, մեր տիրուհուոյն եղբայրն է. նա զիս կը սիրէ. բայց ես այդ մարդեն կը վախեմ, կը քաշվիմ, նա զիս իր փոքրիկ բարբարոսր կանուանէ, երբ զիս գիրկը կառնու, կը համբուրէ ինձ սոսկում կ'ուգայ, կը փախչիմ: Իսկ ուրիշները զիս չեն սիրէր, այդ մարդն էլ չեմ ուզէր, որ սիրէ:

— Բայց մենք քեզ կը սիրենք, Արփենի, չե՞ս ուզէր մեզի դառնալ, այն լեռները երթալ, այն ծաղիկներուն երթալ, որ դու ըսիր թէ կը սիրես:

— Կարելի՞ է դառնալ՝ հոն երթալ. ամէն բան կործանած է հոն, ըսին, բարբարոսք ամէն բան ոչնչացուցեր են, այրեր են. մարդիկը բոլոր սպաննէր են:

— Բարբարոսք ամէն բան կ'ուզեն ոչնչացնել, բայց մենք աստուծով կը շինենք, եւ բոլորովին չենք ոչնչանար, ինչպէս զիս կը տեսնես, որ աստուած պահէր, որ զքեզ դամ ազատեմ եւ տանիմ նորէն քու մայրիկիդ տունը: Ահա չե՞ս յիշէր, Արփենի:

— Ես զքեզ կը յիշեմ, որ զիս ձիուդ վրայ կառնուիր, բայց ես հիմա էլ չեմ ուզէր ձիու վրայ նստիլ, ետքը հիւանդ կը լինիմ:

— Խե՜ղճ Արփենի, այդ անզգամը զքեզ վախցուցեր է: Հիմա ինձ այն զրուցէ՝ չե՞ս ուզեր քու եղբօրդ, ազգականներուդ, քու տունդ երթալ, որ զքեզ կը սիրեն, եւ հոն տիրուհի լինիլ:

— Ինչպէ՜ս չեմ ուզէր,— ըսաւ աղջիկը աչքերը բանալով,— բայց կարելի է երթալ, ինձ այն զրուցէ:

— Ես պիտի երթամ, կ'ուգա՞ս հետս:

— Կ'ուգամ, բայց կը թողո՞ւն: